ՆՈՐ-ԴԱՐ

№ 151 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 4 Սեպտեմբերի 1899 Շաբաթ, 4 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 151

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը 1՝ ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція ,,Норъ-Даръ' կամ Tiflis. Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ՌՈՒՍԱՑ ԷԼԷՔՏՐՈ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

„ՍԻՄԷՆՍ եւ ՀԱԼՍԿԷ"

Ակցիոներական ընկերութեան վարչութիւնը, սրանով պատիւ ունի յայտնելու, որ նա բաց է արել

ԲԱԳՈՒԻՑ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

թատրոնական հրապարակի վրայ, Արաֆելովի տանը, պոստատան դիմաց.

Հասցէ նամակների համար.—Акц. Общ. Русск. Электр. заводовъ „Сименсъ и Гальске" *Баку.*
Հասցէ հեռագրների համար.— Сименсъ-Баку.

(118) 10—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. - Արդարադատութեան վերջին խօսքը:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.—Գանձակից:
Առողին էլ լաւ պիտի:
Նամակ խմբագրութեան:
Թղթակցութիւններ.—Արմաւիրից:
Քաղաքական. — Ֆրանսիա: Թիւրքիա:
Խառն Լուրեր:
Հեռագրներ:
Բանասիրական.— Դիտողութիւններ պ. Ս. Սապահ-Գիւլեանի վերջին յօդուածի առթիւ:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 3 սեպտեմբերի 1899 թ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ

Ինչպէս որ սպասելի էր, ամբողջ լուսաւոր աշխարհի մամուլն զբաղուած է Ռեննի զինւորական դատարանի վճռով. այդ մասին ամեն երկրի մամուլը իւր դիտողութիւններն է անում:

Ռեննի զինւորական դատարանը Դրեյֆուսին յանցաւոր ճանաչեց և տասը տարի բանտարկութեան դատապարտեց՝ մեղմացնող հանգամանքներ ընդունելով: Իսկոյն խօսք եղաւ և Դրեյֆուսին ներումն շնորհելու մասին:

Մտածող մարդն անշուշտ պիտի հարցնէ. եթէ Դրեյֆուսը յանցաւոր է, այդպէս էլ յանցանքը մեղմացնող հանգամանքներ կարող են լինել. եթէ նա դաւաճան է, էլ ինչու խօսել նրան ներումն շնորհելու մասին: Այդպիսի հարց առաջարկողն անտարակոյս պիտի գայ այն ուղիղ եզրակացութեան, թէ Դրեյֆուսի գործում իրաւաբանական, արդարադատութեան խնդիրներից դուրս հաշուի էին առնուած գործի հետ անմիջապէս կապ չունեցող քաղաքական պայմաններ, որոնց զոհ է բերւում Դրեյֆուսը:

Մենք, քաղաքական հանգամանքները մէկ կողմ ձգելով, նայում ենք գործի վրայ զուտ իրաւաբանական, արդարութեան և մարդկայնութեան տեսակէտից:

Ռեննի վճիռը, օրինակ, Բեռլինում ամբողջ մամուլի և բոլոր քաղաքական կուսակցութիւնների կողմից ընդունուել է մեծ զզուանքով, և ամենքն այդ վճիռը միաբերան դատարանական սպանութիւն են համարում:

Ռուսաց լաւ և բարեխիղճ մամուլը նոյնպէս վրդովուած է և գրում է, որ Ռեննում քաղաքական հաշիւներն արդարադատութիւնը ճնշել են, և կատարուել է իրաւաբանական մեծ սխալ, քանի որ գործի ամբողջ քննութիւնից երևաց, որ Դրեյֆուսին վերագրեալ յանցանքը հաստատող ոչ մի փաստ չկայ:

Այսպէս՝ «Курьеръ» թերթը խորին ցաւակցութեամբ խօսում է Ռեննի դատավճռի մասին և շարունակում. —

Դատարանական քննութիւնից, ըստ երևոյթին, այնպէս էր երևում, թէ Դրեյֆուսին պէտք է որ արդարացնեն: Միմիայն նախապաշարմունքի ոյժից և զօրքի պատուին իբրև թէ պաշտպանելու կարեւորութիւնից կարելի եղաւ կրկնել դատարանական սխալը:

«Ճշմարտութիւնը յաղթական քայլերով առաջ է ընթանում»—բացականչեց Էմիլ Զոլան Հանրու կեղծումը յայտնուելուց յետոյ:

Այդ մարգարէութիւնը լիովին չիրագործուեց. ճշմարտութիւնը նորից ծանր արգելքի հանդիպեց. հարկաւոր է նորից հերոսական ջանք հոգու տոկունների կողմից, որպէս զի յաղթահարուի Ֆրանսիան շրջապատող խաւարը:

Եւ տարակոյս չկայ, որ մեծ Ֆրանսիայում, վաղ թէ ուշ, կը ծագէ ճշմարտութեան արեգակը, և կը փարատուեն չարութեան ու փոխադարձ ատելութեան ստուերները, որոնք տակնուվրայ են անում երկիրը:

Անտարակոյս ճշմարտութեան արևը պիտի ծագէ մի օր, երբ մարդկանց մէջ ատելութիւնը և կուսակցական կատաղի կռիւը դադարի: Այն ժամանակ կը յայտնուի, թէ ինչ է կատարուել. ով է մեղաւորը. Դրեյֆուսը, որ այսօր նորից դատապարտուել է, թէ նա՛ որ ազատ շրջում է և ծաղրում նոյն իսկ իրեն պաշտպանող, խնայող և օգնողներին:

Հաւատացած ենք, որ ամեն մի խղճմտանքով մարդու համար, որի մէջ դեռ չէ մարել խղճի ձայնը կուսակցական կրքերից, Դրեյֆուսի գործի վրայ կը նայէ միմիայն իրաւաբանական և մարդկայնութեան տեսակէտից:

Անտարակոյս մէկը դաւաճանել է, բայց ով է դաւաճանել. Դրեյֆուսը թէ՛ մի ուրիշը:

Զուտ իրաւաբանական տեսակէտից եթէ կարելի չեղաւ հաստատել, որ Դրեյֆուսն է դաւաճանել, պէտք է նրան անմեղ հրատարակել, բայց, քաղաքական հանգամանքների շնորհիւ, պարտք է դրւում Դրեյֆուսի վրայ հաստատելու, որ ինքը չէ դաւաճանողը, այլ ուրիշը:

Այդ բաւական չէ. նրանից խլում են այդ ուրիշը, բուն դաւաճանը հրապարակ հանելու միջոցները:

Այդ դրութեան մէջ դրուած, Դրեյֆուսը յանցաւոր է ճանաչւում, որովհետև յանցանքը պէտք է որ մէկը գործած լինի. աւելի յարմարը նա՛ հրեան է ճանաչւում:

Ռեննի դատավարութիւնը կարող է ամեն երկրի անաչառ և խելօք իրաւաբանների, դատաւորների քննութեան և դիտողութիւնների առարկայ դառնալ:

Գործն իսկապէս դեռ չէ վերջացել. այդ ինքը՝ Դրեյֆուսն է ասում.

«1894-ին ինձ,—ասում նա,—միաձայն յանցաւոր ճանաչեցին և դատապարտեցին. այժմս հինգի դէմ երկու հոգի ինձ անմեղ են ճանաչում. յառաջադիմութիւնն ակնյայտնի է. սպասենք, որ ճշմարտութիւնը տանէ յաղթանակը»:

Եթէ Դրեյֆուսն ասած էլ չլինի այդ խօսքերը, այնուամենայնիւ դրանով որոշւում է այն ուղին, որով պիտի ընթանան արդարադատութեան գործի պաշտպանողները:

Մի օր հօ պիտի պարզուի ամեն բան, թէկուզ ինքը՝ Դրեյֆուսը բոլորովին ոչնչացած, փոշի դարձած լինի:

Այս դարու վերջումն էլ ճշմարտութիւնը մեծ նեղութիւններով և զոհաբերութիւններով միայն կարողանում է իրեն համար ճանապարհ բանալ:

ՔՐՈՆԻԿՈՆ

Գորու յաջորդ նշանակուած է արժ. Սահակ վարդապետ Տէր-Միքայէլեան, որ տարիներ առաջ Շամախու կոնսիստորի նախագահ էր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԹԻՒ

«Նոր-Դար»-ի աշխատակիցներից պ. Ս. Սապահ-Գիւլեանն իրաւամբ գրաւել է ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը՝ իւր վերին աստիճանի լուրջ յօդուածներով հասարակական խնդիրների մասին, որոնց մէջ նա երևեցնում է մտաւոր բարձր պատրաստութեան հետ՝ մի օրինակելի հայերէն լեզու: Մեր գրականութեան թափուր անդաստանում մի այդպիսի հաջուադէպ երևոյթ իւր վրայ է դարձնելու և այն անձերի ուշքը, որոնք ուղղակի կապուած են մամուլի հետ իրենց մտաւոր ու բարոյական շահերով: Նրանք կարող են փոքր ինչ շունչ քաշել յուսահատութեան ճնշող հոգսերից, թէ միայնակ չեն այն ասպարէզում, որտեղ լոկ փուշ ու տատասկ են բուսած, որտեղ ախոյեանալայ՝ խաչը պէտք է կրել մինչև նահատակի կատափնաեղին, որտեղ չորս կողմից նրանց վրայ են թափւում նզովք ու անէծք և կոյր հալածանք, որտեղ հրեշտակներն էլ մարդկանց հետ մէկտեղ նախատում են նրանց անարգութիւնը:

Այս պայմաններում, ի հարկէ, ուրախալի է հանդիպել մի ոք, որ փոթորկալի կեանքի յորձանքներն անցնելուց յետոյ՝ կրկին սաւառնում է գաղափարների խաղաղ աշխարհում, ձգնում է պարզել կեանքի ու մտքի խորին հարցերը, և ընթերցողների մի մեծ բազմութիւն հաղորդակից է անում իւր գաղափարներին: Այդ հաղորդակցութիւնը մտաւոր շաղկապ է առաջ բերում նրա և ընթերցողի միջև, զի «գաղափարների համայնութիւնը կապում է մարդկանց» իսկ ամենայն շաղկապ յառաջադիմութեան ուժգին շարժիչ է: Մտաւոր շաղկապն առաջնորդում է համերաշխութեան՝ տեսական մասում, իսկ տեսականը միշտ ղեկավար է գործնական կեանքի: Ուստի ամեն մի քայլ, որ նպաստում է մտաւոր համերաշխութեան և միաբանութեան, նախապատրաստող է համերաշխ կեանքի ու գործունէութեան:

Այս պայմանն աւելի ոյժ ունի մտացի դասի անհատների մասին, որոնց կոչումն է ղեկավար լինել հասարակական բոլոր գործերի: Նրանք են ուղղութիւն և շարժում տալիս այդ գործին, նրանք են հասարակութեան մտաւոր աչքը, համեմիչ ալը, լուսաւոր ճրագը: Պէտք է բարձր տեղ դնել այդ ճրագը, որ լոյս տայ ամենքին, որոնք տանն են: Պէտք է բարձրացնել մտացի դասը, որ հասարակաց գործն առաջ ընթանայ:

Իսկ բարձրացնել նրան կարելի է միմիայն տեսական հարցերը պարզաբանելով, յայտնի սկզբունքները քննադատելով և ճշմարտութիւնը նրանցից զատելով: Առանց տեսական լուրջ պատրաստութեան, կրկնում ենք, զուր է անցնել գործնականին, որ միշտ կըկաղայ այդ թերութիւնից, զի սա լոկ գործադրութիւն է նրա սկզբանց:

Տեսական հարցերը պարզելու համար անհրաժեշտ է մտացի դասի անհատների մէջ մտաւոր սերտ յարաբերութիւն հաստատել, իսկ այդ կարելի է մտքերի ազատ փոխանակութեամբ: Մարդս միայն մարդով է ճանաչում իրեն, սա մի ակնյայտ ճշմարտութիւն է: Որքան էլ անհատը իւր առանձնութեան մէջ քանքարաւոր և բազմագէտ լինի. նա իւր թաքցրած գանձերի արժէքը չափել կարող է միմիայն շփուելով իւր նմանների հետ: Մտաց այդպիսի փոխանակութիւնն ու կեանքի փոխադարձ ազդեցութիւնները միակ պայմանն են քաղաքակրթութեան: Ուստի մեր մէջ էլ ապագայի գրաւականը ներկայ մտաւոր ոյժերն են լինելու՝ իրենց փոխադարձ հաղորդակցութեամբ՝ տեսական հարցերը պարզելու համար: Դրանով կարելի է միաբանել նրանց մի քանի հաստատ սկզբունքների վրայ, որոնք ելակէտ պէտք է հանդիսանան հասուն գործնական քայլերի համար:

Այս նպատակով պէտք է ունենալ մի անկողմնակալ ու ազատ մամուլ, որ բերան լինի և արտայայտող թէր և դէմ կարծեաց ու դատողութեանց: Այդ կարծիքներն ու դատողութիւններն առայժմ մնալու են տեսական հողի վրայ, առանց շօշափելու առօրեայ կեանքի հրատապ խնդիրներն ու «օրուան չարիքը», որոնք պատճառ են կրքերի յուզման և կուսակցական մոլեռանդութեան: Կեանքը կռիւ է և [illegible] ալեկոծութիւն. Նրա շարժումները ղեկավարւում են պէսպէս նիւթական բիրտ կարիքներով: Անկարելի է այդ ցած հողի վրայ ստեղծել համերաշխ մտածողութիւն: Պէտք է բարձրանալ այդ մթնոլորտից դէպի անկաշառ մտքի աշխարհը, որտեղ իշխում են գաղափարները՝ իրենց վեհափառ բացարձակութեամբ: Նրանք ցոյց են տալիս կեանքի յաւիտենական ալիքների մէջ՝ ինչ որ մնայուն է և յարատեւ, ինչ որ կազմում է նրանց էութիւնը, որով կատարւում է նրանց ընթացքը, որով նրանք կան, շարժւում են և են: Միայն այստեղ մենք կարող ենք գտնել այն յաւիտենական ճշմարտութիւնները, որոնք պէտք է մեզ չափանիշ լինին մտքի ու կեանքի երևոյթների մէջ. միայն այստեղ են այն սկզբունքները, որոնց վրայ հարկ է մեզ միաբանել՝ ապագայ հասուն գործունէութեան համար:

Այս միաբանութեան ճանապարհ հար-

Թող կուզէինք անունել «Նոր-Դար» լրագիրը, որ, մեր կարծիքով, ազատ է եղել աններողամիտ հալածանքներից: Միմիայն այդպիսի թերթերը կարող են խմբել իրենց շուրջն իսկական ոյժեր, որոնց գոյութեան էական պայմանը մտքի և խօսքի ազատութիւնն է: Հալածաւէր մամուլը չի կարող գրաւել ողջամիտ դասի համակրութիւնը. Նրա աշխատակիցները միշտ ու ամեն տեղ են և կլինեն թերուս անհատները, որոնց խակութեանը մատչելի է նրա միակողմանի ժխտականութիւնը: Ուստի եթէ մի թերթ ուզում է բարձրանալ, թող նշանաբան ընտրի իւր համար մտքի և կարծիքների ազատութիւնը. այն ժամանակ նա կռուան կունենայ հասարակութեան ընտիր մասի մէջ:

Այս լի յոյսերով, որ մենք դրել ենք ի վաղուց հետէ «Նոր-Դար»-ի վրայ, դիմում ենք նրա խմբագրութեանը և խնդրում, որ սա լայն բաց անի իւր թերթի սիւնակները մտքերի ազատ փոխանակութեան համար, որով ելք կըտայ հասարակութեան ներհուն ու թմրած մտաւոր ոյժերին. դրանով նա ուժգին զարկ կարող է տալ հասարակական գիտակցութեանը, որ միակ պայմանն է մեր ապագայի բարեկեցութեան: Դա է ճշմարիտ «գործունէութիւնը», որից հայրենիքը բարիք է սպասում. տեսական հարցերի լուծումն է այն «գործը», որից ծագե-

— Լսում ենք, որ Կարսի յաջորդ Եղիշէ վարդ. Մուրադեանն արձակւում է իր պաշտօնից:

— Վերջին պոստով Թիֆլիս հասած Կ. Պոլսի հայ թերթերը բերին մեզ Գրիգորիս արքեպիսկոպոս Ալէաթճեանի մահուան լուրը: Սրբազանը վախճանուել է օգոստոսի 15-ին: Թաղումը կատարուել է հետևեալ օրը, օգոստոսի 16-ին:

— Թիֆլիսի քաղաքային ինժեների պաշտօնն ստանալու համար քաղաքային վարչութեանը ցանկութիւն են յայտնել 33 հոգի, որոնցից մեծ մասը նորաւարտ անփորձ ինժեներներ են: Քաղաքային վարչութիւնը դեռ ևս ոչոքի չի ընտրել:

— Թիֆլիսի նահանգական իշխանութիւնը փոխել է քաղաքի օգտին գիւղական մթերքներից տուրք առնելու մասին Թիֆլիսի քաղաքային խորհրդի յուլիսի 16 ին կայացրած որոշումը:

— Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրի Կովկասի հաւատարմատար պ. Մեդվեդեն այս օրերս մեկնում է Նովոռոսիյսկ՝ դիմաւորելու համար Կովկաս եկող երկրագործութեան մինիստր Ա. Ս. Երմոլովին:

— Կախէթի երկաթուղու համար ճանապարհներ որոշելու աշխատանքները վերջացած են. այդ ճանապարհներն սկսւում են Վերին-Աւճալայից դէպի Թելաւ և վերջանում են Սղնախում: Մտադրութիւն կայ ճանապարհները շարունակել Թելաւից այն կողմը՝ Լագոդեխի, Զաքաթալի և Նուխու վրայով մինչև Անդրկովկասի Եւլախ կայարանը:

— Կովկասում թէյի տնկարաններ ձգելու համար ակցիոներական մի ընկերութիւն է կազմուած 150,000 ր. դրամագլխով:

— Սոյն սեպտեմբերին վերաբացուելու են Թիֆլիսում դպրոցական անցեալ տարում հիմնուած միջնակարգ-հանրակրթական դասընթացները: Որոշուած է այս տարի բանալ երկու բաժանմունք—մէկը՝ նոր ունկնդիրների, միւսն անցեալ տարուայ ունկնդիրների համար: Դասախօսութիւնները տեղի կունենան արական առաջին գիմնազիոնի շէնքում:

— Խնդիր էր յարուցուած, թէ արդեօք Կովկասում ծառայութեան առանձին արտօնութիւնները պէտք է սահմանափակել միմիայն տեղացի պաշտօնեաների համար, թէ՝ նմանապէս այն անձերի համար ևս, որոնք թէև Կովկասումն են ծնուած, բայց սերւում են ուրիշ տեղերից եկած բնակիչներից: Այդ խնդրի վերաբերմամբ, ինչպէս հեռագրում են «Կավկազ»-ին Պետերբուրգից, բացատրուած է, որ օրէնքի մէջ սահմանուած մի քանի արտօնութիւնների սահմանափակման ենթարկւում են Կովկասում և Անդրկովկասում տեղացի պաշտօնեաները, առանց նայելու նրանց տեղային ծագման: Այդ սահմանափակման մէջ է նաև լրացուցիչ ռոճիկ ստանալու իրաւունքը:

— Օգոստոսի 26-ին, Պետերբուրգում, տեխնիկների և արխիտեկտորների ներկայութեամբ, պ. պ. Բայդալին և Խուդեակով փորձեր են կատարել իրենց հնարած մի գործիքով, որով բնակարանները տաքացնում են նաւթով: Հնարողների ասելով, իրենց գործիքը գործադրող բնակիչը իր բնակարանը կարող է տաքացնել օրական միմիայն հինգ կոպ. ծախսելով: «Նով.» լրագրի ասելով, գործիքը ծուխ չի անում և կարող է յարմարեցնուել ամեն տեսակ վառարանի և պլիտի:

Այս առթիւ հարկ ենք համարում յիշեցնել, որ պ. Սարգիս Պօղոս-Բեկեան Բագւում տարիներ առաջ արդէն հնարած ունի այդպիսի մի գործիք, որի մասին իր ժամանակին գրուած է «Նոր-Դար»-ում և որը նոյնպէս նաւթով տաքացնում է ամեն տեսակ վառարան և պլիտ: Այդ գործիքը գործադրւում է Բագւում: Հետաքրքրական կլինէր համեմատել Պետերբուրգի և Բագւի հնարագէտների գործիքներն իրար հետ:

— Ռազմավիրական ճանապարհով Թիֆլիս հասան ֆրանսիական այն հարիւրից աւելի տուրիստները, որոնք եկել են Կովկասում և Անդրկովկասում գիտնական մի ուղևորութիւն կատարելու: Ներկայումս նրանք զբաղուած են քաղաքի զանազան նշանաւոր տեղերը դիտելով: Նրանց մէջ կան մի քանի տիկիններ և օրիորդներ:

— Այստեղ օգոստոս ամսին յանկարծ շոգը կտրուեց, եղանակը զովացաւ, երեկոները մինչև անգամ սառը քամի էր փչում, որ պայմանաւորուած էր Կովկասեան բարձր լեռների վրայ եկած առատ ձիւնով: Թւում էր, թէ շոգերն անցել են: Այժմս սեպտ. ամսումն ենք, օրերը գեղեցիկ են, բայց շոգ, ցերեկը մինչև անգամ անտանելի շոգ է լինում:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԳԱՆՁԱԿԻՑ.—Դարձեալ մարդասպանութիւններ: Ղարաչինարցի 15 տարեկան մի պատանի, Մակիչ անունով, լսելով որ իր եղբայր Բալային մի թուրք գետի ջրի մէջ է ձգել և խեղդում է, վրայ է հասնում իսկոյն և, իր եղբայրն ազատելու նպատակով, ձեռքի պայտարի մուրճով հարուածում է թուրքի գլուխը: Թուրքն այդ հարուածներից՝ մի քանի օր յետոյ մեռնում է: Այժմ աշխատողներ կան, որ մի կերպով հաշտութիւն կայանայ, և առաջն առնեն սարսափելի մի վրիժառութեան: Հաշտեցնելու յոյսեր կան: Ցանցագործը բանտումն է:—Ուրիշ մի դէպք: Քաղաքից մօտ 22 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Մուսուս գիւղից երկու եղբայր՝ Սողոմոն և Գրիգոր Աղաջանեանները երեկոյեան ժամը 7-ին սայլերը փայտ բեռցած քաղաք են բերում ծախելու համար: Գիւղից մի վերստ հազիւ թէ հեռացած՝ երկու անզէն եղբայրներն էլ գնդակահար են լինում: Չարագործները ոչինչ չեն տարել: Սպանութիւնը, ըստ երևոյթին, վրիժառութեան հետևանք է, և կասկածում են այն թուրքերի վրայ, որոնք երկար տարիներ հողային վէճ են ունեցել Մուսուս գիւղի համայնքի հետ և վերջ ի վերջոյ գործը տանուլ են տուել: Այդ թուրքերն արդէն իր ժամանակին սպառնացել են յիշեալ գիւղացիներին՝ նրանց բոլորին կոտորել անխտիր: Սպանութիւնը կատարուելուց մի ժամ առաջ, հայերից եղել են մարդիկ, որ այդ զինուած թուրքերին տեսել են սպանութեան տեղը և ճանաչում են ոճրագործներին: Այդ հայերը, վախից, չեն յայտնում մարդասպանների անունները, կարծելով որ այդպիսով կարող են, գոնէ իրենք, թուրքի վրիժառութիւնից ազատուել:—Ամսիս 28-ին, քաղաքիս Նորաշէն թաղում, Կոստանդին Մնացականեան անունով 14 տարեկան մի պատանի, անզգուշութիւնից, բերդանի հրացանի գնդակին զոհ գնաց: Գնդակը կողերից մտել և գանկից դուրս է եկել:

ԱՍՈՂԻՆ ԵՒ ԼՍՈՂ ՊԻՏԻ

(Փիլիսոփայի յուշատետրի համար)

Անցեալ օրը կրկին պատահեց ինձ հին պաշտօնավար ծերուկը, որ անցեալ տարի ևս երբեմն հնից ու նորից պատմում էր ինձ: Նա շատ տաքացած էր և այս անգամ դարձաւ դէպի ինձ ասելով.

—Պարոն, անցեալներում մի պարոնի հետ խօսեցայ և նա իմ բոլոր խօսքերս բառ առ բառ գցել է լրագիր: «Նոր-Դար»-ից չեմ կարող դժգոհել, որովհետև նրա սովորութիւնն է չծածկել իրողութիւնը. դեհ, որ բանն այդտեղ է հասել, մի վերջին խօսք էլ ասեմ քեզ, կուզես գրէ, կուզես մի գրիր:

—Էհ, խօսք ունիս, խօսքդ ասա, այդ յառաջաբանը թող. քեզանում շատ բան կայ. ափսոս որ այդ ծերութեանդ հասակումն էլ վախենում ես ասելու:

—Ո՞վ է վախենում. ես իսկի 20 տարեկան ժամանակս չեմ վախեցել, այժմ պէտք է վախենամ, այն էլ ճշմարտութիւնն ասելուց, երբ հա՜յ-հա՜յս գնացել է, մնացել է վա՜յ-վա՜յս:

—Դեհ լաւ, խօսիր, տեսնենք:

- Չէ, դեռ խօսքդ յետ առ: Ես վախկոտ չեմ. ինքս հարիր եօթը տարեկան եօթ ամսական եմ. միրուքս սպիտակ, մազերս սպիտակ: Ես եօթը կաթողիկոս եմ տեսել, տասնըեօթն առաջնորդ եմ փոխել, քսանեօթը պաշտօն եմ վարել, երեսունեօթը սխալ գործ եմ ուղղել, քառասունեօթը կռիւ եմ ձգել չարութեան դէմ, յիսուն եօթը բողոք եմ ուղարկել եզուիտների ինտրիգների դէմ, վաթսունեօթը գովեստ եմ ստացել, եօթանասունեօթը...:

—Հէ՜ լաւ, այդ եօթերդ թող. հօ ես գիտեմ, շատ ես ասել: Բայց եթէ վախկոտ չես, ինչո՞ւ ամեն բան բացէ ի բաց չես ասում, ինչո՞ւ շատ անգամ լռում ես:

—Եղբայր, լռում եմ, որովհետև երբեմըն երբեմն խօսքիս չեն լսում: Պատմեմ քեզ մի դէպք: Լսած կլինիս երջանկայիշատակ Ցոլակի վարդապետի մասին. այդ այն հռչակաւոր Ցոլակի վարդապետն է, որ Գանձասարում և այդ կողմերում յայտնի էր իր ուսմամբ ու փիլիսոփայութեամբ: Նա թողել է փիլիսոփայական գրուածներ էլ. Շուշում և առհասարակ Ղարաբաղում որքան ուսեալ քահանաներ կան, ուսեալ մարդիկ կան, բոլորն էլ նրա աշակերտներն են, որոնք բաւական ուսում ու պատիւ ունին, բայց ամաչում են ասել, որ իրենք Ցոլակի վարդապետի աշակերտներն են: Ապերախտ աշակերտներ: Ի՞նչ և իցէ: Այդ վարդապետը շարունակ գործունէութեան մէջ էր. դժբախտաբար այդ ապերախտ աշակերտներից ոչ մէկը չշարունակից իր վարժապետի գործը, այլ ամենքն էլ պատուի ու փողի յետևից գնացին: Բայց այս թողնենք. ինչ անեմ. երբ վանքերի անշուքութիւնը տեսնում եմ, թոյնով լցւում է բերանս այդ ապերախտ աշակերտների դէմ:

«Մի անգամ Ցոլակի վարդապետը գալիս է Շուշի. այդ լինում է մօտաւորապէս 1837—1838 թուերին: Քաղաքի հարուստներից մէկը հրաւիրում է նրան ճաշի, լաւ պատւում է և մէկ արծաթ տուփ է նուիրում քթախոտի համար Մեծ պատւով ելնում է Ցոլակի վարդապետը, իսկոյն գալիս է ներկայանա Բաղդասար միտրապոլիտին, որ ընդու նում է նրան բազմաթիւ շրջապատո ների մէջ: Միտրապոլիտը իր սէր ցոյց տալու համար, դոչում է:

«—Ցոլակի վարդապետ, մէկ բռնոթի հանէ՛ քաշենք:

«—Ծառայ եմ, սրբազան.—ասում Ցոլակի վարդապետը և հանում արծա թի բռնոթամանը և տալիս նրան:

«—Բօ. բահ էս ո՞րտեղից է:

« Ծառայ եմ. ինձ նուիրել են, ես ձեզ եմ նուիրում:

«Ուրախանում է միտրապոլիտը, քա շում, և յետոյ կրկին կանչում:

«—Ցոլակի վարդապետ, բա այն ո խարի բռնոթամանը:

« Ծառայ եմ. այս էլ ոչխարի բռ նոթամանը,—ասում է Ցոլակի վարդա պետը և հանում իրեն տալիս ոչխար փոքրիկ պարկից շինած քսակը:

«Միտրապոլիտը սաստիկ զարմանու է իր վարդապետի երկու բռնոթաման ների հակասութեան վրայ: Այս նկա տում է Ցոլակի վարդապետը և ասում:

«—Սրբազան, միտդ է, որ Եփրեմ կաթողիկոսն ինձ ճաշի էր հրաւիրել. ես հետը նստած ճաշում էի, իսկ դու ձեռ քերդ սրտիդ դրած կանգնած էիր Հայ բումենց տանը 1821 թուին:

« Բօ. այդ ո՞րտեղից միտդ ձգեցիր, որ այդ չասէիր, չէ՞ր լինիլ:

«—Ապա որ դու ոչխարի բռնոթամա նին այդքան մարդկանց մէջ չասէիր, չէ՞ր լինիլ.—պատասխանում է, խաչենցի միտրապոլիտի հայրենակիցը:

«Հիմա ես էլ, բարեկամ, սպասում եմ, մինչև որ ոչխարի բռնոթամանիս անունը տալիս են, այն ժամանակ ես էլ իրենց ստրկարար կանգնելն եմ ասում Հայրապետի առաջ: Երբ գալիս են, մեծ մեծ խօսում, իրենց թանդ ծախում, այնպէս ցոյց տալիս, որ իբր թէ երկնքից աստղեր են պոկում,—հապա չ սեմ որ երեկ մէկէլ օրը սալդաթսկի բազարում կինտոների հետ բէֆ էր անում, քէալլափաչա ուտում և գինի կոնծում: Այսօր իր ո՞ր գիտութեան և արժանիքի համար այդ պաշտօնի մէջ դրուեց:

«Երբ առանձին շրջանում խօսակցում են, որ իրենք ոչ մի բանի չեն հաւատում, ամեն ինչ ծաղր են համարում, ոչ մեծ են ճանաչում ու ոչ փոքր. —հապա չասեմ,թէ ա՜յ կաշառակ,դու որ փորով սպիտակ ես, կռնով կարմիր,

---

լու է կեանքի նոր այգը. Նրա համառութիւնն է, որ մեզ տանելու է դէպի իսկական գործունէութիւնը:

Ինչ ասել կուզի, մեր ասած գործը շատ աւելի դժուար է սովորականից: Տևական մտքի անհնարին ճիգերը խիստ սակաւ անձեր կարող են տանել: Այստեղ էլ պէտք է անխոնջ վաստակել, արիւն քրտինքով, ծանր աշխատանքով ճշմարտութեանը հետամուտ լինել, ծաղկած առողջութիւնն ու գարուն կեանքը՝ առանց խնդութեան հալել ու մաշել, նօթի, անտրտունջ ու անապաստան՝ մաքառումներով տարիներ անցնել. ներքին փոթորկի արհաւիրքներից գիշեր ու ցերեկ անդորր առանձնել, եղբայրներից ու հարազատներից ծաղր ու ծանակի նշաւակ լինել և մարդկային խորը վշտերի կսկիծը վիրաւոր սրտում անմռունչ կրել: Սակայն այս ամեն քրտնաթոր ջանքերը միշտ պսակւում են երկնից օրհնութեամբ: Երբ որ տեսական մասը պատրաստ է, սկսւում է բուն գործունէութիւնը: Այն ժամանակ միայն սա էլ կանգնած չէ աւազի վրայ, որ ուժգին հողմերը հիմքից տապալեն հանրային շէնքը, այլ նա կանգնած է իբրև անսասան ժայռը ծովափնեայ, որի դէմ անզօր են մռնչող ալեաց փշրուող կոհակները: Ուստի օրհնութեամբ կյիշուին այն ձեռքերը, որոնք նպաստել են այդ հիմնադրութեան. զի սրա վրայ պէտք է եկող սերունդը բարձրացնի իր տան իսկական շէնքը: «Նոր-Դար»-ն այս դէպքում անշուշտ կստանայ օրհնութիւնների լիառատ բաժին:

Նոյն նպատակին ծառայելու համար մենք ձեռնարկեցինք մի շարք յօդուածների, որոնք շարունակ կտպուեն «Նոր-Դար»-ում: Նրանց վերնագիրն է «Քաղաքակրթութեան տարերքը», զի այդ տարերքը նոյն վերացական՝ տեսական հարցերն են, որոնց պարզելու վրայ վերը պնդեցինք: Մեծ ուրախութեամբ և երախտագիտութեամբ կընդունէի մեզ արած որ և է լուրջ դիտողութիւն: Միմիայն միահամուռ ոյժերով կարելի է վերջ տալ մտքերի այն շփոթութեանը, որ միակ պատճառն է մեր դժբախտութեան. միմիայն ընդհանուր խորհրդակցութեամբ պէտք է փարատել տարակուսանքները, որոնք աղբիւր են մեր մոլորութեանց:

«Նոր-Դար»-ի պատուական աշխատակիցը, որ առիթ տուեց մեզ այս գրութեան, վաղուց զբաղւում է նոյն խնդիրներով: Նա զետեղել է «Նոր-Դար»-ի էջերում բազմաթիւ ընտիր, մշակուած յօդուածներ այդ՝ մեզ զբաղեցնող հարցերի մասին: Նրա վերջին գրութիւնը *) արժանի է մեր յատուկ ուշադրութեան: Այդտեղ նա խօսում է ազգայնութեան գաղափարի մասին, և քննելով նրա անցեալ պատմութիւնը՝ աշխատում է որ և է եզրակացութեան յանգել ապագայի մասին: Այդ եզրակացութիւնն ամփոփում է իր մէջ այն իդէալը, որին ձգտելու են ազգութիւնները: Որովհետև մենք էլ մի ազգութիւն ենք, ուրեմն մեզ համար էլ դա իդէալ է. այդ կողմն ենք շրջելու մեր բոլոր ոյժերը. դա է լինելու մեր ձգտումների կէտ-նպատակը: Ուստի մեզ համար առաջին գործն է պարզորոշ դնել այդ նպատակը. դրանով կորոշուի և մեր քայլերի ուղիղ ընթացքը:

Քանի որ մենք էլ այս նիւթի մասին երկար խօսելու ենք մեր յօդուածների շարքում, որի մասին վերն արդէն յիշեցինք, ուստի այժմ միայն կքննարկենք պ. Սապահ Գիւլեանի եզրակացութիւնը պատմական շարժման վախճանի մասին: Մենք կարծում ենք, որ շատ օգտաւէտ է մի ճշմարտութիւն պարզ արտայայտել և ամեն առթիւ կրկնել ընթերցողների ականջին, որ լաւ տպաւորուի նրանց գիտակցութեան մէջ: Յիշեալ եզրակացութիւնն ազգութիւնների ապագայի մասին ես ամփոփում եմ երկու կէտերում:

ա.) Ազգութիւնները հետզհետէ պէտք է ընկնեն, կորչեն, միանան իրար հետ, ձուլուեն:

բ.) Նրանց փոխարէն պէտք է առաջ գայ մարդկութիւնը, որտեղ այլ ևս չկան ազգութիւններ:

Աւելի կարճ ասած հեղինակի խօսքերով՝

Ազգայնութեանց գաղափարը հետզհետէ տեղի է տալիս մարդկայնութեան գաղափարին:

Սրանից հետևում է, որ ֆրանսիացիք ու գերմանացիք, անգլիացիք և ռուսները, հայն ու թուրքը, լեհացին ու հրէան, և այլն, և այլն հետզհետէ պէտք է կորցնեն իրենց ազգային ուրոյնութիւնը և դառնան մի ընդհանուր մարդկութեան անդամներ: Այդ ընդհանուր մարդկութեան մէջ, որ վախճանն է պատմական շարժման, չի լինելու այլևս ո՛չ ֆրանսիացի և ոչ գերմանացի, ո՛չ անգլիացի, ո՛չ հայ և ոչ թուրք, ոչ հրէայ և այլն, այլ միմիայն լինելու են մարդիկ: Մի խօսքով այդտեղ խտրութիւն չի լինիլ «ոչ հրէի և ոչ հեթանոսի» մէջ, և ամենքը միասին «եղբայր» են լինելու, կազմելով «մի հօտ և մի հովիւ»:

Դրանից հետևում է և այն, որ իւրաքանչիւր ազգի իւրաքանչիւր անհատ, մանաւանդ նրա մտացի դասը, պէտք է նպաստի գիտակցական գործունէութեամբ՝ իր ազգը միաւորելու ընդհանուր մարդկութեան հետ:

Այս հետևութիւնները հանելուց յետոյ պ. Սապահ-Գիւլեանի յիշեալ եզրակացութիւնից ազգութիւնների ապագայի մասին, ես ինձ թոյլ եմ տալիս հարց առաջարկել և տարակուսել նրանց ճշմարտութեան մասին: Արդեօք ուղի՞ղ են այդ հետևութիւններն ազգութիւնների վախճանի մասին:

Գալով հայ ազգին, գուցէ այդ ուղիղ է տարաբախտաբար, ինչպէս երևում է մեր հասարակաց գործի ընթացքից: Բայց չի կարելի նոյնն ասել նաև, օրինակ, ռուսի, չեխի, լեհացու, հրէայի և այլ հոգով հզօր ազգերի մասին:

Այս խնդիրները, ըստ իս, կարօտ են լուրջ ուսումնասիրութեան և լուսաբանութեան, և ես յուսով եմ, որ պ. Սապահ-Գիւլեանը չի նեղանայ ինձանից տարակուսանքս յայտնելուս համար հրապարակօրէն: Իմ նպատակն է ճշմարտութիւնը պարզել յօգուտ և ի շահ հասարակաց գործի:

Գէորգ Ահարոնեան

Պետերբուրգ, 27 օգոստոսի

---

*) «Ազգայնութեան սկզբունքի շրջափոխութիւնը», «Նոր-Դար» №№ 103, 104, 127 և 128.

գնացքիդ մէջ շարժուն երկրում, այդ վրայիդ սև փետուրներն ինչո՞ւ ես հագել:

«Երբ մեծի հրամանով իրաւունքների տէր է դառնում և յետոյ սկսում ծաղրել իր մեծի հրամանը, նրա կարգադրութիւնների ասկը քանդել, ժողովրդի նուիրական զգացմունքների վրայ քրքջալ ու զուարճանալ,—հապա չասեմ, թէ ո՜վ անաղուհաց քրդի շուն, չէ՞ որ ամէն պատիւ ու գիրք քո երախտաւորներից ես պարտական. միթէ չես վախենում՝ զոյգ աչքով կուրանալ երախտամոռութեանդ համար:

«Երբ մէկը, իր չար նպատակներին չկարողանալով հասնել, այժմ էլ ամեն ամօթ ու պատկառանք մոռացած, ամեն չարութիւն անում է, քանդում, աւերում վրէժխնդրութեամբ և մինչև անգամ սպառնում կրկին թողնել իր լուծը,—հապա չասեմ, ո՜վ սև ագռաւ, դու որ ի բնէ ագռաւ ես, ձայնիդ անախորժ, դէմքդ զազրելի, ինչի ես սպասում կոցահարութեան. լաւ չէ, որ ինքդ թօթափես սիրամարգի փետուրներդ:

«Բայց երբ այս ամենի դէմ բողոքում եմ, սպառնացող վտանգից զգուշացնում, այն ժամանակ ինչ ասեմ՝ երբ ինձ պատասխանում են հետևեալը. «Հանգիստ կաց. մեզ յայտնի է: Դու առակով ես խօսում, ահա քեզ առակով բացատրենք: Մոլլա-Նասրէդդինի մօտ վազեցին շատ մարդիկ և մազեր քանդելով, գլխներին հող ու մոխիր ցանելով գոչեցին ու գուժեցին. ո՜վ Նասրէդդին, ահա որդիդ, որին փայտ անելու էիր ուղարկել, անտառում վայր ընկաւ, գլուխը ծառերով ու գետնով տուաւ և խելքը կորցրեց, խելագարուեց: Բայց Նասրէդդինը նայեց ու նայեց և պատասխանեց. «ով բարեկամներ, ես իմ որդուս լաւ եմ ճանաչում. որդին թէ որ իմ որդին է, նա խելք չէ ունեցել, որ կորցնէր»:

«Այն ժամանակ էլ ինչ ասեմ. գեհ որ խելք չէ ունեցել, այլ ես ինչո՞ւ էի անտառ ուղարկում փայտ անելու. ո՞ր խելք չունեցողի ձեռքը կացին կըտան, ո՞ր խելք չունեցողի առաջ աշխարհներ կըձգին քշելու. անխելքին հօ երկու հաւ էլ պահ չեն տալ:

⁂

«Էհ, ասողին էլ լաւ պիտի: Էլ ինչ շարունակեմ. լաւ էլ չեմ կարող, էլի ասելը կըտանի: Նասրէդդինը մի օր կընում-նայում է և տեսնում հորթին մէկը փախած. շատ յետևից վազում է, չի կարողանում բռնել: Վերջապէս գալիս է տուն և բռնում տանը գտնուող հորթին և սկսում անխնայ ծեծել:

«—Այ Նասրէդդին, չէ՞ որ այդ հորթը մեղաւոր չէ. դրան ինչո՞ւ ես թակում:

«—Օ՜, օ՜, դու չգիտես. սա եթէ փախչի, միւսից աւելի կատաղի կըլինի:

«Այսպէս էլ այժմ. այդ պարկեշտները հօ տեղ ու սահման չթողեցին իրենց անկարգութեան և բռնութեան. վայ մեզ՝ եթէ կուժն ու կոլան լաւ ու հանդարտների գլխին կոտրեն»:

—Ցաւութիւն:

—Ցաւութիւն, սօթնապաշտ ծեբուկ:

Ելիկոյ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատարագի քառաձայն երգեցողութիւնն արդէն զգալի պահանջ դարձած լինելով, մի քանի տեղերից արդէն լրագրութեան միջոցով դիմում են խմբապետներ, որոնք կարողանան խմբեր կազմակերպել և կամ կառավարել: Այս հանգամանքից օգուտ քաղելով մի քանի երաժշտութիւն սիրողներ, խոկոյն, ցանկութիւն են յայտնում խմբեր պատրաստելու և կառավարելու, հաւատացնելով միանգամայն, թէ իրենք սովորած են երաժշտութիւն և պատրաստուած են խմբապետութեան ինձ մօտ:

Ուստի պարտք եմ համարում յայտնել ի գիտութիւն ընդհանրութեան, որ այդ պարոններն ինձ մօտ ոչ սովորած են և ոչ պատրաստուած, գրեթէ առանց բացառութեան: Քառաձայն երգեցողութիւնը թէ սովորելու և թէ խումբ կառավարելու համար, հարկաւոր է ունենալ մի որոշ երաժշտական կրթութիւն, այն է՝ ծանօթութիւն երաժշտութեան տեսութեան հետ, ապա ձայնական երգեցողութիւն և օրինաւոր ծանօթութիւն մի որև է նուագական գործիքի վրայ,—պիանոյի կամ ջութակի վրայ—մինչդեռ այդ պարոնները գրեթէ առանց բացառութեան յանձն առնելով մի այդպիսի պատասխանատու գործ, իրենց անպատրաստականութեամբ աղաւաղում են եկեղեցական երգեցողութիւնը. արհամարհելով միաձայն երգեցողութիւնը, սովորեցնում են քառաձայն, բայց աղճատուած և թերի ձևով, որով ժողովրդի արդարացի դժգոհութեանը տեղիք են տալիս: Շատերը նրանցից թոյլ են տալիս իրենց նոյն իսկ ապօրինի վարմունք դէպի իմ ներդաշնակած պատարագը. առանց հասկանալու սկսում են կրճատումներ և փոփոխութիւններ անել թէ ձայների դասաւորութեան, թէ նուանսների և թէ չափերի ընթացքի մէջ: Մի քանիսը մինչև անգամ համարձակւում են նոյն աղօթքներ անպարկեշտ կերպով ներդաշնակել և գործածել եկեղեցիներում, հաւատացնելով ժողովրդին, իբր թէ, այս բոլորն իմ աշխատութիւնն է:

Այս բոլոր դէպքերից ոմանց անձամբ ականատես լինելով և ոմանց մասին էլ հաստատ աղբիւրներից տեղեկութիւն ունենալով՝ հարկ համարեցի այս նամակով դիմել այն անձերին, որոնցից կախուած է երգեցողութեան գործը եկեղեցիներում, խնդրելով, որ չյանձնեն այս պատասխանատու և նուիրական գործն այդպիսի անպատրաստ «խմբապետներին», այլ, զգուշութեան համար, ամեն ցանկութիւն յայտնողից պահանջեն կամ իմ կողմից տրուած վկայական, կամ բարձրագոյն ու միջնակարգ երաժշտական դպրոցի վկայական:

Այս կերպով վերոյիշեալ չարիքի առաջը կառնուի և եկեղեցիներում կըմնի հետզհետէ կանոնաւոր ներդաշնակուած երգեցողութիւնը, որ մեր ամենիս միակ ցանկութիւնն է:

Երաժշտապետ Մ. Եկմալեան

Թիֆլիս, 29 օգոստոսի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՄԱՒԻՐ, 30 օգոստոսի. Կիրակնօրեայ հարցը, վաղուց է, քաշքշւում է: Պէտք է, արդեօք, կիրակի օրերը խանութները փակել: Եթէ մեր վաճառականներին առանձին-առանձին խօսեցնէք, կասեն՝ որ պէտք է. բայց իրողութիւնը հակառակն է ցոյց տալիս. միմեանց նայելով ամենքն էլ խանութները բաց են անում: Թող Թորոսովը փակի, որ ես էլ փակեմ—ասում է Կիրակոսովը: Նոյնպիսի պատասխան կըստանաք նաև Եակով Պաւլովիչից, Կակով Պետրովիչից, Զանգուլ Իւանիչից...

Այսպէս ահա, մեղքն իրար վրայ են գցում, բայց, իսկապէս, ամենքն էլ մեղաւոր են: Մեզանում, ոստիկանութեան կարգադրութեամբ, կիրակի օրերը մինչև եկեղեցու պատարագը չվերջանալ, ոչ ոք իրաւունք չունի դուռը բանալ, ծախս անել: Ի հարկէ, այս կարգադրութեան միտքն այն է, որ քրիստոնեայ մարդիկ այդ օրն Աստուծուն յիշեն, եկեղեցի գնան աղօթելու... Վա՜յ մեզ. ինչ օրի ենք հասել. ոստիկանութիւնը մեզ պէտք է յիշեցնի, թէ մենք էլ քրիստոնեայ ենք: Սակայն ներեցէք ինձ ասել, որ մենք աւելի ձևանալով՝ ոստիկանութեան բարի կարգադրութիւնը կեղծութեամբ չհասկանալու ենք դնում. կիրակի օրերը փափուկ անկողնում երկա՜ր քնում ենք, որ հանգստանանք. ամբողջ շաբաթ հոգնելիս դադար է գալիս առաւօտեան 5 ժամին վերկենալով ու մինչև ուշ գիշեր աշխատելով. ներելի չէ՞ միթէ, որ մի օր հանգիստ քնենք: Դրա այս ոչինչ. դա ներելի է, բայց վեր կենալիս հանգիստ թէյ ենք վայելում ու կամաց-կամաց քայլերս ուղղում ոչ թէ եկեղեցին (է՛, բան չունե՛նք), այլ դէպի խանութի դուռը: Դուռը կանգնած անհամբեր սպասում ենք, թէ երբ պէտք է առաւօտ եկեղեցու պատարագը վերջանայ (հայոցը փոքր ինչ ուշ է վերջանում), որ խոկոյն ամենից շատ մենք բաց անենք. հոգ չէ, եթէ մուշտարի չկայ, ապա հօ անհոգ է: Սակայն մեր դրացի ռուսներն այսպէս չեն վարւում. կիրակի առաւօտ նրանց չէք գտնի դուքանի առջև, այլ կըտեսնէք իրենց եկեղեցում լիքը լցուած քրիստոնէական պարտքը կատարելիս: Ահա այսպէս. մեզ նման հայերի վարմունքը տեսնելով՝ օտարներն իրաւունք են համարում երբեմն մեր ազգը չարչի ժողովուրդ անուանելու...

Ներկայումս Արմաւիրում կիրակնօրեայ հարցը հերթական է դառել: Օգոստոսի 21-ին այդ առթիւ վաճառականների ժողով հրաւիրեցին. բայց — ինչպէս պատմում են—ոչինչ դուրս չի եկել, որովհետև մեծամեծներից շատերը բացակայ էին գիւղերս. այժմ սպասում են նրանց վերադարձին:

Մենք մի անգամ «Նոր-Դար»-ի մէջ ցանկութիւն էինք յայտնել, որ գործակատարներն այս գործում եռանդ ցոյց տան. սակայն նրանց մեծ մասն ընտանեկան ինչ-ինչ հանգամանքների պատճառով՝ տեղերից չզրկուելու համար, վախենում են ասել, խօսել, իրար մէջ ընդհանուր կապ հաստատել: Թէպէտ սրանից մի երկու տարի առաջ գործակատարներից ոմանք՝ իրենց խելքով կիրակնօրեայ հարցը շուտ վճռելու դիտմամբ՝ սխալ էին արել ու ազդեցիկ վաճառականներին անանուն սպառնական նամակներ էին գրել, բայց այդ անմիտ սպառնալիքները «յունքը շինելու տեղ, աչքը հանեցին», գործն աւելի փչացրին: Մեր աղաներից մի երկուսին այդպիսի մահանա էր հարկաւոր, որ խիստ նեղացած ձևանային ու կիրակնօրեայ սուրբ պահելը—ի վրէժ անանուն հեղինակների—մերժէին: Նրանից յետոյ՝ այս բազմաչարչար հարցը հա՛ առաջ էր գալիս, հա՛ քացով տալիս՝ յետ էին մղում... Յոյս ունենանք, սակայն, որ այս անգամ մեր վաճառականները թէ իրենց և թէ գործակատարների շահն աչքի առաջ ունենալով՝ իբրև քրիստոնեայ կըկատարեն իրենց այս անհրաժեշտ պարտքը: Կիրակնօրեայ հանգստութեամբ բարոյական ու ֆիզիքական օգուտ ստանալուց զատ, նիւթականապէս էլ, կարծում ենք, չեն վնասուի, որովհետև իրենց մուշտարիները, երբ իմանան կիրակնօրեայ խանութների փակ լինելը, հասարակ օրերը կըգան առևտուր անելու:

Բաւական է, վաճառական պարոնայք, խիղճ ունեցէք. միթէ կարելի է օրական 16 ժամ և աւելի աշխատելուց յետոյ՝ շաբաթուայ մէջ մարդ մի օր չհանգստանայ:

Անգլիայում օրէնքը 8 ժամ են աշխատում, իսկ կիրակի օրերը նրանց սուրբ պարտականութիւնն է եկեղեցում անպատճառ գտնուել...

Կապուտաչ չինացին էլ ունի իր հանգստութեան օրն ու աստուածպաշտումը. մենք պիտի լինենք միայն այդ բարիքից զրկուած: Լաւ մտածենք. ինչքան էլ որ շատ աշխատենք, ինչքան էլ շատ ոսկի դիզենք, վերջ ի վերջոյ մեր բաժինը կը մնայ մի բուռն հող ու մի գազ կը տան՝ յաւիտեանս ամէ՛ն:

Ենի-Կալէ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.—Ինչպէս և սպասելի էր, Գերմանիայում սաստիկ զայրացած են, որ ֆրանսիական կառավարութիւնը ոչ մի նշանակութիւն չէր տալիս իր այն հանդիսաւոր յայտարարմանը, թէ Դրէյֆուսի հետ երբեք ոչ մի յարաբերութիւն չի ունեցել: Vossische Zeitung-ը նկատում է, որ եթէ Ռեննի դատարանը ֆրանսիական կառավարութիւնը լինէր, այն ժամանակ այդ վերաբերմունքը կարող էր այնպիսի հետևանքներ ունենալ, որոնք Մերսիէին նոյնից կըստիպէին գլխին անկացնել սարսափից ատամները կրճտացնելով, թէ ահա, ո՛ր տեղ որ է, պատերազմ պիտի ծագի: «Ֆրանսիան,—ասում է «Freisinniges Deutsches Blatt»-ը,—ինքն է խայտառակում իրեն ամբողջ աշխարհի առաջ՝ քանդելով դէպի իր փառաւոր անցեալը տածուած վերջին համակրանքները»: Պահպանողական «Post» լրագիրը յայտարարում է, թէ Գերմանիայի զինւորական շրջաններում հաստատ համոզուած են, որ Դրէյֆուսն անմեղ է, և թէ դատավճիռը կարող էր հետևանք լինել սարսափի այն ազդեցութեան, որ գեներալներն ունեցել են իրենց ստորադրեալ զինւորական դատաւորների վրայ: Գերմանիան կատարեց իր պարտքը և աշխատեց երկրորդ արգելք լինել երկրորդ անարդար դատավճռի: Նրա մեղքը չէ, եթէ նրա ձայնը չլսեցին: «Daily News»-ը հարցնում է, թէ որտեղ կարելի է Դրէյֆուսի մեղաւորութեան ապացոյցի գէթ մի ստուեր գտնել: «Tribuna» լրագիրը կարծում է, թէ դէպի առողջ դատողութիւնը ցոյց տրուած այդ արհամարհանքը հասել է մտքի և հոգու մանկացութեան վախճանից քաղաքակրթութեան մէջ: «Köln. Zeit.»-ը դատաւորների վճիռը վախկոտութեան մի գործ է համարում. դատավճիռը ցոյց է տալիս, որ դատարանի ղեկավարը ո՛չ թէ խիղճն է եղել, այլ քաղաքական շարժառիթները: «Vopwärts»-ը, որ Ֆրանսիային համակրող կուսակցութեան բերան թերթն է և մինչև անգամ բողոքում էր Էլզասի միացման դէմ, արհամարհանքով է խօսում այն զինւորական դատաւորների մասին, որոնք մինչև անգամ չունեցան մոլեռանդութեան քաջութիւն և չհամարձակուեցին Սատանաների կղզին ուղարկել իրենց ընկերոջը, որի անմեղութիւնը երևան եկաւ ամբողջ աշխարհի առաջ հրապարակական դատի ժամանակ: Լրագիրը կրկնում է Ժորեսի հետևեալ խօսքերը. «Այս ինչ են դարձրել կղերականութիւնն ու միլիտարիզմն ազնիւ Ֆրանսիան»:

— Ամենքը վկայում են, որ Դըմանժի պաշտպանողական ճառը խիստ զօրեղ է եղել: Պաշտպանի պերճախօսութիւնը ցնցում էր ամբողջ դահլիճը: Շատերը լաց էին լինում: Լաց էր լինում նաև Դրէյֆուսը, մանաւանդ այն ժամանակ, երբ Դըմանժը կարդում էր Սատանաների կղզուց նրա գրած նամակները: Պարիզում Դըմանժի ճառը հրատարակեցին առանձին յաւելուածներով, որոնք ձեռքէ ձեռք էին խլւում: Անգլիական բարձրագոյն դատարանի անդամ լորդ Ռոսսելը, որ ներկայ էր նիստին, Դըմանժի ճառն ամենանշանաւոր ճարտասանութեան մի տիպար անուանեց: Խայտառակ դատավճիռը կայծակի ազդեցութիւն ունեցաւ ամենքի վրայ: Դրէյֆուսն ասաց. «Լա՜ւ: Այնուամենայնիւ երկու ձայն իմ օգտին է: Ինչ անենք. կըկռուենք»:

—Գերմանական պաշտօնական թերթում Դրէյֆուսի անմեղութեան վերաբերեալ յայտարարումը, «Նով.»-ի Բեռլինի թղթակցի ասելով, տպուած էր Վիլհելմ կայսրի հրամանով: Այդ յայտարարումը Պարիզից պաշտօնապէս հաղորդուած էր Ռեննի դատարանին:

—

ԹԻՒՐՔԻԱ.—Կ. Պոլսում, ըստ երևոյթին, վերջապէս ուշադրութիւն են դարձնել իրերի դրութեան վրայ Թիւրքական-Արաբիայում, ուր ապստամբական շարժումը խիստ սպառնական ծաւալ է ստացել: Ձեռք առնուելիք առաջին միջոցն այն կլինի, որ Եմէնը կըբաժանուի երեք առանձին վիլայէթների:

—«Stadard»-ի Կ. Պոլսի թղթակցի ասելով, Զմիւռնիայից մասնաւոր տեղեկութիւններ են ստացուած, որ, պալատից հեռագրով գնացած հրամանի համաձայն, այնտեղ ձերբակալուած են նշանաւոր շատ քաղաքացիներ թէ քրիստոնեաներից և թէ մահմեդականներից: Միակ բացառութիւնը կազմել են միայն Քեամիլ փաշայի որդին և Էսատ բէյ: Ձերբակալումների պատճառը յայտնի չէ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մենելիք Թագաւորին հայ խոհարարապետը.—Հապէշստանի Թագաւոր Մենելիքի քով անգլիական դեսպան Հարինգտոն հարկապետ վերջերս Մանչէսթր ժամաներ: Ռեւտերի Գործակալութեան թղթակիցն անոր հետ տեսակցութիւն մը ունեցած ըլլալով, դեսպանին հաղորդած հետաքրքրաշարժ տեղեկութիւններն ի գիր առած է: Դեսպանը հապէշ Թագաւորին ընդարձակ պալատան կարգուսարքին վրայ տեղեկութիւն տալով, նկարագրեց մեծ խնճոյք մը, զոր Ն. վեհափառութիւնը տուեր է անգլիացի դեսպանին և ուրիշ եւրոպացի հիւրերու: Սեղանը պատրաստուած էր գահոյից մեծ դահլիճին մէջ, ուր դրուած մեծ և փառաւոր գահը Ֆրանսայի կառավարութեան նուէրն է հապէշ ինքնակալին: Ճաշերը բազմատեսակ էին, և շատ լաւ պատրաստուած, մասամբ եւրոպական ճաշակով, մասամբ ալ հապէշական ճաշակով: Անգլիացի դեսպանը կարծեր է, թէ գաղղիացի վարպետ մը եփեր է այս կերակուրները, բայց Մենելիք Թագաւոր ըսեր է, թէ իր խոհարարապետն հայ է, և ո՛չ միայն ինք գոհ է անոր ծառայութիւններէն, այլ և իրեն այցելող եւրոպացի հիւրերն ալ միշտ գոհ մնացած են անոր պատրաստած կերակուրներէն: Դեսպանական հացկերոյթէն ետքը, ի պատիւ անգլիացի հիւրին, Մենելիք Թագաւոր հացկերոյթ տուեր է իր անձնական պահնորդ գունդերէն 8,000 զինուորներու և սպաներու, և այս մեծագոյն խնճոյքին ալ կերակուրներն ամենքն ալ հապէշական ոճով պատրաստուեր են հայ խոհարարապետին տնօրէնութեան ներքև: «Բիւզանդիոն»

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԱՐԻԶ, 1 սեպտեմբերի.—«Gaulois»-ն քննադատելով Զոլայի յօդուածը յանդիմանում է նրան, որ նա չափազանց յաճախ դիմում է օտարերկրեայ միջնորդութեանը: Վիլհելմ կայսրը չափազանց խելօք է, որպէս զի խառնուի ֆրանսիական գործերի մէջ: «Echo de Paris»-ն նոյն բանին նուիրած մի յօդուածում ասում է. «Ֆրանսիան խիստ վաղուց սպասում է անդորրութեան, ուստի չպէտք է նրան անհանգստացնել օտարերկրեայ միջամտութեան սպառնալիքով:

Մի քանի լրագրներ հաղորդում են, որ մինիստրների խորհուրդը երեկ քննում էր Դրէյֆուսին ներում շնորհելու խնդիրը, բայց ոչ մի որոշում չկայացրեց:

ՊԱՐԻԶ.—Զինւորական մինիստրը վճռել փոփոխութիւններ կատարել գլխաւոր շտաբի խուզարկու բիւրոյի մէջ, որն այսուհետև բացառապէս զինւորական բնաւորութիւն կունենայ և ամենևին չի խառնուիլ ոստիկանական ծառայութեան և հակալրտեսութեան մէջ: Այս կարգադրութիւնները զօրութիւն կըստանան սեպտեմբերի 3-ին:

ԲԵԼԳՐԱԴ.—Պետական դաւաճանութեան համար մեղադրուող Ժիվկովիչը յայտարարում է, թէ պետական պրոկուրորն անարդար կերպով է մեղադրել իրեն՝ սպանութեան փորձին մասնակցելու համար: Կարագէորգիևիչին նա երբեք չի ճանաչել և նրա կողմնակիցների հետ ոչ մի յարաբերութիւն չի ունեցել. սպանութեան փորձի օրը նա տանն էր: Ժիվկովիչը դժգոհութիւն է յայտնում այժմեան կառավարութեան դէմ: Մի քանի վկաներ ցուցմունք են տալիս, որ Պաւլովիչի խանութում Ժիվկովիչը կարդում էր մի արգելուած տառատոր. ուրիշ վկաներ ասում են, որ Կնեզևի թաղման ժամանակ Ժիվկովիչը դամբանական արտասանեց, որի մէջ վիրաւորական խօսքեր կային Ալէքսանդր թագաւորի և Միլանի համար:

ԲԵԼԳՐԱԴ.—Էքսպերտները ցուցմունք տուին, որ պրեֆեկտ Անջելիչը իր կնոջն ու եղբօրն՝ անձնապաշտպանութիւնից առաջ ուղղած նամակները, յիրաւի, գըրուած են նրա ձեռքով:

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Ամդրուպի գրենլանդական արշաւախումբն այս գիշեր այստեղ հասաւ: Արշաւախումբը հետազօտել է Գրենլանդիայի արեւելեան ափերը, սկսած Անգմանգսալիկից նրա հիւսիսային լայնութեան 65° 50′-ից մինչև 67° 22′: Հանուած են ափերի քարտէզները մինչև Կանգերդլուգսուակ: Կենսական մթերքների պահեստներ են շինուած Ամդրուպի ապագայ արշաւախմբի համար, որը մտադիր է հետազօտել ծովեզերքը Սկորեսբեզունդից սկսած մինչև 70° դէպի հարաւ և մինչև ցարդ հասած կէտը: 67°-ի վրայ Ամդրուպը գտել է էսկիմոսների մնացած ցեղի բնակարաններ, նա վերցրել է իւր հետ կմախքներ և ցեղագրական առարկաների հաւաքածուներ: Արշաւախումբը շատ ուսումնասիրութիւններ է կատարել սառցի, հիւսիսափայլի, ջրի վերաբերմամբ, այլ և մագնետիկական և օդերևութաբանական ուսումնասիրութիւններ: Հաւաքուած են բուսաբանական, կենդանաբանական և երկրաբանական առարկաներ: Էսկիմոսների մարդաբանական հետազօտութիւններ են կատարուած:

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)
(սեպհական տուն)
Հեռախօս № 130

Երթեւեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2---4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն ամէնայն օր՝ ժամը 8---10 առաւօտեան---վճարը 2 ր.: Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամէն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի: Չունեւորները ձրի են: Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունուողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրու գիշերուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մտնողները---1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար: Երկունքից ազատուելը 10 ր. մինչև 50 ր.: Անդամահատութիւն ըստ համաձայնութեան ժամանակ ձրի: Չունեւորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առարկութեամբ ձրի:

Հիւանդանոցի տէր և տեսուչ՝
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է ցեր. 4 ժ. 15 ր., հասնում Թիֆլիս առ. 8 ժ. 40 ր., Թիֆլիսից Բաթում մեկնում է առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 ժ. 32 ր.:

Մարդատար № 3 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., Թիֆլիս հասնում է եր. 6 ժ. 38 ր., Թիֆլիսից Բաթում մեկնում է եր. 7 ժ. 37 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 12 ր.:

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է առ. 9 ժ. 15 ր., Թիֆլիս հասնում է եր. 8 ժ. 53 ր. Թիֆլիսից Բագու մեկնում է եր. 9 ժ. 23 ր., Բագու հասնում է ցեր. 11 ժ. 40 ր.:

Պոստային № 4 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է եր. 9 ժ. 05 ր., Թիֆլիս հասնում է առ. 9 ժ. 45 ր., Թիֆլիսից Բագու մեկնում է առ. 11 ժ. 32 ր., Բագու հասնում է առ. 6 ժ. 15 ր.:

—

ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ

№ 5 գնացքը Թիֆլիսից Բորժոմ մեկնում է ցեր. 2 ժ. 40 ր., Բորժոմ հասնում է եր. 7 ժ. 35 ր.:

№ 6 գնացքը Բորժոմից Թիֆլիս մեկնում է գիշ. 2 ժ., Թիֆլիս հասնում է առ. 7 ժ. 35 ր.:

№ 7 գնացքը Թիֆլիսից Գորի մեկնում է առ. 10 ժ. 15 ր., Գորի հասնում է ցեր. 12 ժ. 46 ր.:

№ 8 գնացքը Գորուց Թիֆլիս մեկնում է եր. 7 ժ. 40 ր., Թիֆլիս հասնում է եր. 10 ժ. 02 ր.:

№ 15 գնացքը Թիֆլիսից Մցխէթ մեկնում է առ. 8 ժ. 10 ր., Մցխէթ հասնում է առ. 8 ժ. 55 ր.:

№ 16 գնացքը Մցխէթից Թիֆլիս մեկնում է առ. 10 ժ. 08 ր., Թիֆլիս հասնում է առ. 10 ժ. 55 ր.:

№ 17 գնացքը Թիֆլիսից Մցխէթ մեկնում է եր. 5 ժ 15 ր., Մցխէթ հասնում է եր. 5 ժ. 56 ր.:

№ 18 գնացքը Մցխէթից Թիֆլիս մեկնում է եր. 6 ժ. 53 ր., Թիֆլիս հասնում է եր. 7 ժ. 32 ր.:

Ծանօթ. Ամառանոցային №№ 17 և 18 գնացքները երթեւեկում են տօների նախորդ և տօն օրերը, իսկ № № 15 և 16 գնացքները տօն և տօներին հետեւող օրերը:

—

ՌԱԶՄԱ-ՎՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

(մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը)

Թիֆլիսից մեկնում են

Հինգ տեղ ունեցող կարեթներ. առաջինը առ 7 ժ. գիշերում է Մլեթում, Վլադիկավկազ հասնում է հետեւեալ օրը եր. 7 ժ. 20 ր., երկրորդը — առ. 9 ժ., գիշերում է Փասանաուրում, Վլադիկավկազ հասնում է հետեւեալ օրը եր. 9 ժ. 20 ր.:

Վեց տեղ ունեցող օմնիբուսներ, առանց գիշերելու. առաջինը ցեր. 1 ժ., Վլադիկավկազ հասնում է հետեւեալ օրը ցեր. 3 ժ. 25 ր., երկրորդը եր. 7 ժ. Վլադիկավկազ հասնում է հետեւեալ օրը եր. 9 ժ. 50 ր.:

Լինէյկա, առանց գիշերելու, ցեր. 3 ժ., հասնում է Վլադիկավկազ հետեւեալ օրը եր. 6 ժ. 20 ր.:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ

Հինգ տեղ ունեցող կարեթներ. առաջին առ. 7 ժ. գիշերում է Մլեթում, Թիֆլիս հասնում է հետեւեալ օրը եր. 6 ժ. 30 ր., երկրորդը առ. 9 ժ., գիշերում է Գուդաուրում, հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը եր. 7 ժ. 55 ր.:

Վեց տեղ ունեցող օմնիբուսներ առանց գիշերելու. առաջին առ. 11 ժ., Թիֆլիս հասնում է հետեւեալ օրը ցեր. 1 ժ. 20 ր., երկրորդը եր. 8 ժ., հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը եր. 10 ժ. 15 ր.:

Լինէյկա, առանց գիշերելու, ցեր. 3 ժ., հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը եր. 6 ժ. 10 ր.:

ԲԺԻՇԿ Գ. Ս. ՀԵՐՑՖԷՅԼԴ
Թիֆլիս, Մադաթովսկայա, 5
մասնագէտ կաշու, վեներական, սիֆիլիսական և միզային գործարանների հիւանդութիւնների (ելեքտրականութեամբ), վերադարձաւ դէպի արտասահման կատարած գիտնական ուղեւորութիւնից և վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնն ամեն օր առ. ժ. 9 11 և եր. ժ. 5 8.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի անձն, որը իւր կրթութիւնն ստացել է արտասահմանում և երկար ժամանակ վարել է հայոց գպրոցներում ուսուցչի և աւագ-ուսուցչի պաշտօններ,
ցանկանում է
ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ
Լեզուների դասեր ունենալ թէ իւրեն մօտ և թէ հայ ընտանիքներում: Պայմանների մասին դիմել՝ Сименовская улица № 15 ա. յարկ:
10—2

ՍԵՒ ԵՒ ՍՊԻՏԱԿ ՊՂՊԵՂ
(Перецъ черный и бѣлый)
Ծեծած, ծակոտկէն ունեցող թիթեղեայ արկղիկների, նոյնպէս և սրուակների մէջ՝ սեղանի համար, $^{1}/_{32}$-ից մինչև 1 ֆունտ,
ՄԱՏԱԿԱՐԱՐ Ռ. ԿԵՕԼԵՐ ԵՒ ԸՆԿ.
գործարանից, ծախու կայ ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ աւելի նշանաւոր վաճառականների մօտ:
Ծեծած պղպեղի խառնուրդն այնպիսի մի սովորական երեւոյթ է և այն աստիճան անցել է սահմանից, որ պատրաստի ծեծած պղպեղը յաճախ աւելի էժան է ծախւում, քան չծեծածը: Իսկ Ռ. Կեօլեր և Ընկ. ֆիրման, ինչպէս ամենքին յայտնի է, կատարեալ երաշխաւորութիւն է ապրանքի մաքուր յատկութեան:
M 3. 3 3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ Գ. Լ. ԿՈՒՃԱՆԵԱՆԻ
Բեհբութեան փող. (Նախկին Սադովայա), Սոլոլակում, տուն բժ. Քաչազնեանցի № 50.
Աշակերտներ է ընդունում պատրաստելու համար գիմնազիոնների, ռէալական ուսումնարանի, կադետների կորպուսի համար և այլն: Աշակերտների ընդունելութիւնն օգոստոսի 24-ին, պարապմունքների սկիզբը՝ սեպտեմբերի 1-ին:
(114) 4–4

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՒՈՒԹԵԱՄԲ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку Прачешная, домъ Теръ Ованесов)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողներին տրւում են ատեստատներ: Կուրսերում աւանդւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային. 3) առևտրական թղթակցութիւն. 4) առևտրական տնտեսագիտութիւն. 5) առևտրական մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղութիւն ձեռագրի):
Պարապմունքները սկսւում են սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամենայն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովիանեան և Ընկ.» Բագուայ բաժանմունքում... Օտարաքաղաքացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունւում են գիշերօթիկներ: Կուրսի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը տրւում են եւ ուղարկւում են ձրիաբար: Օտարաքաղաքայինները դիմում են учредителю коммерческихъ курсовъ А. И. Тер Каспарову, Баку.
(99 25 - 7

ԵՐԱՆՈՒՀԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(ԾՆՆԴ. ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆ)
ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑՈՒՄ
ԵՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶՈՒՄ
աշակերտ-աշակերտուհիների ընդունելութիւնն սկսուել է, օգոստոսի 20-ից, պարապմունքը՝ սեպտեմբերի 1-ից: Երեխաները պատրաստւում են գիմնազիայի ռէալական և այլ միջնակարգ դպրոցների համար:
(116) Սադովայա, (Բէհբութովսկայա № 38 5—5

ТАМАРЪ ИНДІЕНЪ
КАРПИНСКАГО.
Слабительные конфекты.
Не заключаютъ въ своемъ составѣ ничего раздражительнаго.
Принимаются не измѣняя ни въ чемъ ежедневныхъ привычекъ
ПОЛУЧАТЬ МОЖНО ВО ВСѢХЪ АПТЕКАРСКИХЪ МАГАЗИНАХЪ.
ГЛАВНЫЙ СКЛАДЪ:
Варшава. Аптека Фр. В Карпинскаго, Электоральная ул., № 39. соб. домъ.
Цѣна коробки въ 12 штукъ 75 коп.
Адрессъ для телеграммъ: ВАРШАВА. КАРПИНСКІЙ.
(76) 20 - 19

ОТКРЫТА ПОДПИСКА
НА ИЗДАВАЕМЫЙ ВЪ БАКУ СЪ НОЯБРЯ **1899** ГОДА
Иллюстрирован. фототипіями ежемѣсячный журналъ
„КАВКАЗЪ и СРЕДНЯЯ АЗІЯ“
ВЪ ФОТОГРАФІЯХЪ И ОПИСАНІЯХЪ.
ФОРМАТЪ IN QUARTO.

Подписная цѣна съ пересылкою и доставкою.

На годъ	12 руб.
» $^{1}/_{2}$ годъ	7 »
» 3 мѣсяца	4 »
» 1 »	2 »

Учебныя заведенія пользуются 25% скидкой.
Допускается разсрочка платежа.

Плата за напечатаніе объявленій въ отдѣлѣ публикацій.

	Впереди текети	Позади текста
За цѣлую страницу	50 р.	30 р. --- к.
» $^{1}/_{2}$ страницы	30 »	20 » --- »
» $^{1}/_{4}$ »	15 »	10 » --- »
» $^{1}/_{8}$ »	8 »	5 » --- »
» $^{1}/_{16}$ »	5 »	2 » 50 »
» $^{1}/_{32}$ »	3 »	1 » 50 »

При многократныхъ публикаціяхъ дѣлается скидка

Адресъ: Баку, въ контору редакціи «Кавказъ и Средняя Азія».

Отъ Редакціи:

Утвержденая г. Министромъ Внутреннихъ Дѣлъ обширная программа нашего журнала—позволяетъ редакція заняться всестороннимъ изученіемъ Кавказа и Средней Азіи и быть иллюстраторами текущей въ нихъ жизни, призванной къ прогрессивному оживленію съ начала цивилизаторской миссіи нашего Правительства въ этой части свѣта.

Придавая особенное значеніе роду иллюстрацій - редакція избрала только фотографію, передающую абсолютную дѣйствительностъ - всегда желательную, а въ изученіи естествознанія, географіи, этнографіи и археологіи—положительно необходимую.

За художественную и техническую сторону фототипій—можетъ ручаться двадцатилѣтнее занятіе этимъ искуствомъ, какъ профессіей - редактора-издателя, положившаго много труда на составленіе научно-интересной коллекціи снимковъ Азіи, имѣющихъ, главнымъ образомъ, появляться на страницахъ журнала.

Текущія событія будутъ иллюстрироваться нашими сотрудниками-фотографами, находящимся во всѣхъ мѣстахъ Азіи. Каждый № будетъ содержать 5 листовъ печатнаго текста и отъ 8 – 10 отдѣльныхъ рисунковъ на бристолѣ, составящихъ къ концу года богатый альбомъ оригинальныхъ фототипій.

3—3 Редакторъ-Издатель **А. М. Мишонъ.**

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԹԻՖԼԻՍ, ՆԱԳՈՐՆԱՅԱ ՓՈՂՈՑ, № 9
Ցանկացողը ունենալ իրենց առևտրական գործերի համար անցեալ տարիս տարւում ուսման ընթացքն աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին՝ Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուից հաստատուած ծրագրի համեմատ, և ունին օրինաւոր ատեստատներ:
Ընդունելութիւններն սկսուելու են սեպտեմբերի 1-ից: Կուրսերի ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ձրիաբար եւս. Ծովեանովների բանկային գրասենեակում և Կուրսեր հիմնողի բնակարանում: Օտար քաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П. Мануэльянцу.
(97.) 12—7.

Дозв. цензурою. Тифлисъ, Августъ 3-го дня, 1899 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանց А. О. Меликъ Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ